

Վտարման (գույքի անօրինական կալանավորում) գործընթացի գծապատկեր

Քայլ 1. Ստանալ ծանուցում տանտիրոջից` 3, 30, 60 կամ 90-օրյա ժամկետով, պետք է լինի գրավոր տեսքով:

Եթե COVID-ով ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ ՉՎՃԱՐՎԱԾ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ Է ԱՌԿԱ (որը պարտք է հանդիսացել հետևյալ ժամանակահատվածում` 31.01.2020-01.03.2020), ապա պետք է տրվի 15-օրյա ժամկետով ծանուցում COVID-ի վտարումների պաշտպանությունների մասին: Լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք DRC-ի կայքէջ COVID-ով պայմանավորված վտարումներին առնչվող պաշտպանության համար` չվճարված վարձակալության մասին իմանալու նպատակով:

Քայլ 2. Դատական ծանուցագիր և բողոք. սրանք դատական այն փաստաթղթերն են, որոնք պետք է տրամադրվեն Ձեզ կամ տան անդամին

ՉԳՈՒՇԱՑՈՒՄ. երբ ստանում եք դատական ծանուցագիրը և բողոքը, Ձեր տրամադրության տակ ունեք **5 դատական օր**, որպեսզի ուղարկեք «պատասխան», որը համարվում է դատական ձևաթուղթ: Ձեր տեղական դատարանի ինքնաաջակցման կենտրոնը կարող է օգնել Ձեզ այս ձևաթուղթը լրացնելու հարցում: Ձեր տեղական դատարանի կայքէջը կարելի գտնել այստեղ` https://www.courts.ca.gov/find-my-court.htm?query=browse_courts

Դատական օրերը չեն ներառում շաբաթ, կիրակի օրերը և դատական կարգով նախատեսված տոները: Օր 0 = ծանուցումը տրամադրելու օրը, օր 1 = հաջորդ օրը:

Վտարման գործընթացի հաջորդ քայլը կախված է նրանից, թե արդյոք ներկայացրել եք դատական ծանուցագրի և բողոքի պատասխան:

Քայլ 3.A. Եթե պատասխան չեք ներկայացրել, ապա սպասվում է պատասխանողի բացակայությամբ կայացված դատական որոշում և կացարանի ԿՈՂՊՈՒՄ:

Պատասխանողի բացակայությամբ կայացված դատական որոշումը տրվում է այն ժամանակ, երբ չեք պատասխանել բողոքին և դատական ծանուցագրին: Սա նշանակում է, որ առանց դատավարության Դուք ավտոմատ կերպով վտարվում եք: Պատասխանողի բացակայությամբ կայացված դատական որոշումից 7-9 օր անց, շերիֆը կփակցնի ծանուցում այն ազատելու մասին, և 5-7 օր անց նա կվերադառնա և կկողպի այն:

Քայլ 3.B. Եթե ներկայացրել եք պատասխան. խաղաղ կարգավորում և դատավարություն

Խաղաղ կարգավորում` Ձեր և Ձեր տանտիրոջ միջև ձեռք

բերված համաձայնությունն ԿԱՄ

Դատավարություն . պատասխանը ներկայացնելուց հետո մոտ 10 օրվա ընթացքում պետք է ստանաք նամակ դատարան ներկայանալու ամսաթվով: Դատավարությունը կսահմանվի մոտ 21 օրվա ընթացքում:

Եթե պարտվեք դատավարության ընթացքում, ապա **պետք է ազատեք այն** , նույն ընթացակարգն ու ժամանակացույցն է, ինչը ներկայացված է Զայլ 3.Ա-ում:

Եթե շահեք դատավարությունը, ապա **մնում և վճարում եք վարձավճարի պարտքը**.

Վտարման (գույքի անօրինական կալանավորում) գործընթացի գծապատկեր

Ծանուցում՝ 3, 30, 60 կամ 90-օրյա ժամկետով, պետք է լինի գրավոր տեսքով: Եթե COVID-ով պայմանավորված չվճարված վարձակալության գումար չէ (որը պարտք էր եղել հետևյալ ժամանակահատվածում՝ 31.01.2020-01.03.2020), ապա պետք է ստանաք 15-օրյա ժամկետով ծանուցում, այդ թվում COVID-ի դեպքում առկա վտարման պաշտպանությունների պարագայում:

Պատական ծանուցագիրը և բողոքը պետք է ներկայացվեն

Պատասխանելու համար ունեք 5 դատական օր*:

Պատասխան

Ոչ մի պատասխան

Պատավարություն .
պատասխանը ներկայացնելուց հետո մոտ 10 օրվա ընթացքում պետք է ստանաք նամակ, որում առկա է դատավարության ամսաթիվը: Պատավարությունը կսահմանվի մոտ 21 օր անց:

Խաղաղ կարգավորում

Պատասխանողի բացակայությամբ կայացված դատական որոշում

Շահել

Պարտվել

Մնալ և վճարել վարձակալության պարտք գումարը

Կողպել

Կողպում. 7-9 օր անց շերիֆն այն ազատելու մասին ծանուցում կփակցնի: 5-7 օր անց շերիֆը կվերադառնա և կկողպի այն:

*Պատական օրերը չեն ներառում շաբաթ, կիրակի օրերը և դատական կարգով նախատեսված հանգստյան օրերը:
Օր 0 = ծանուցումը տրամադրելու օրը, օր 1 = հաջորդ օրը: